ժողովրդին հարանոր ձեռքբերումներ՝ ի սեր ազգային մեր կյանքի առավել զորացման եւ հայրենանվեր ու հավատաշեն նոր արարումների իրականացման»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՀԽ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՕԼԱՎ ՏՎԵՅՏԻՆ

Սեպտեմբերի 22-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւԱմենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար Օլավ Տվեյտի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանի:

Շնորհավորելով եւ իր բարեմաղթանքները փոխանցելով Օլավ Տվեյտին նրա ընտրության առիթով՝ Վեհափառ Հայրապետը ուրախություն հայտնեց պատվիրակությանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունելու կապակցությամբ: Իր խոսքում Նորին Սրբությունը նշեց, որ ԵՀԽ-ի հայ ներկայացուցիչները մեծ խանդավառությամբ եւ բարձր գնահատանքով են խոսում գլխավոր քարտուղարի անձի, նվիրումի եւ աշխատանքի մասին:

Անդրադառնալով Հայ Եկեղեցու մասնակցությանը ԵՀԽ-ի աշխատանքներին՝ Ամենայն Հայոց Հայրապետն ընդգծեց, որ այն ապագայում առավել խորությամբ է շարունակվելու եւ Մայր Մայր Սուրբ Էջմիածինն ըստ ամենայնի զորավիգ է լինելու ԵՀԽ-ի առաքելության արդյունավորմանը, քանի որ այդ առաքելությունը նպաստում է եկեղեցիների եղբայրական ոգու զորացմանն ու ջանքերի մեկտեղմանը՝ խարսխված փոխադարձ սիրո եւ միմյանց նկատմամբ ունեցած հարգանքի վրա:

Հանդիպմանը Նորին Սրբությունը նաեւ իր գնահատանքը բերեց Մայր Աթոռում գործող միջեկեղեցական երկու կառույցների՝ Հայաստանյան Կլոր սեղան միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի եւ ԷԿԼՕՖ-ի պատասխանատուներ Կարեն Նազարյանին եւ Տիգրան Հովհաննիսյանին՝ Հայաստանի ժողովրդի բարօրությանն ու եկեղեցիների համագործակցությանն ուղղված ջանքերի համար:

Վերջում ԵՀԽ գլխավոր քարտուղար Օլավ Տվեյտն իր շնորհակալությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին հրավերի եւ ջերմ ընդունելության համար, ինչպես նաեւ անդրադարձավ Հայ Եկեղեցու կարեւոր մասնակցությանը խորհրդի աշխատանքներին:

Նույն օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ԵՀԽ գլխավոր քարտուղար Օլավ Տվեյտի գլխավորած պատվիրակությունը հանդիպեց Հայաստանում գործող Կլոր սեղան եւ ԷԿԼՕՖ էկումենիկ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը գլխավոր քարտուղարին ներկայացվեց կազմակերպությունների գործունեությունը, որից հետո քննարկվեցին համագործակցության մի շարք ընկերային ծրագրեր:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ